Ֆ.Վուլֆ.

# «ՂԱՐԱԲԱՂԸ ԿԱՐՈՂ Է ԿԱՅԱՆԱԼ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

*Երեւան, 2 սեպտեմբերի* – Ինչպես արդեն հաղորդվել է, տարածաշրջանում գտնվող ԱՄՆ-ի Վերջինիա նահանգից կոնգրեսական Ֆրանկ Վուլֆը սեպտեմբերի մեկին մամլո ասուլիս է տվել Երեւանում: Այստեղ իր համակրանքն արտահայտելով հայ ժողովրդի հանդեպ, կոնգրեսականը նշեց, որ Ղարաբաղի ժողովուրդը բացառիկ ազատասիրություն ունի եւ պետք է ինքնուրույն, առանց որեւէ միջամտության որոշի իր ճակատագիրը: Ասուլիսից հետո պատասխանելով «Փաստ»-ի թղթակցի հարցերին, թե հնարավո՞ր է համարում արդյոք Ղարաբաղի կայացումը որպես անկախ պետություն, պրն. Վուլֆն ասաց. «Ղարաբաղը լիովին կարող է կայանալ որպես անկախ պետություն, բայց դրա համար անհրաժեշտ է, որ նախ եւ առաջ խաղաղություն տիրի այս հողում»:

«ՓԱՍՏ»